ՔԵՆՏԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՃԱՌԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ

Եղիշե Պատրիարքին Հայոց, Սրբոց Հակոբյանց վանք, Սիոն լեռան վրա.

Պատիվ է ինձ համար ընդունվել Ձերդ Ամենապատվության, Սրբոց Հակոբյանց Ձեր միաբանության եղբայրների կողմից, այստեղ, Երուսաղեմում, Սիոն լեռան վրա, Ձեր Պատրիարքարանում։ Հաճույքով եմ հիշում Ձեր այցելությունը Լոնդոն 1955 թվականին և ուրախ եմ, որ կարողացա այցելել Ձեզ այստեղ։ Ձեզ բոլորիդ ցանկանում եմ մեր Տիրոջ և Փրկչի անվամբ խաղաղություն և խնդություն։ Ձեր տոկունությունը հավատի մեջ, հավատարմությունը դառն հալածանքների և պայքարի ընթացքում՝ հայտնի են բոլորին։

Անգլիկան եկեղեցին ուրախ է, որ վայելում է Հայ Ուղղափառ եկեղեցու սերտ ընկերակցությունը։ Անգլիկանների համար առանձին ուրախություն է, որ ամեն տարի Երուսաղեմի մեր արքեպիսկոպոսը հրավիրվում է մասնակցելու Տիրոջ չարչարանաց Ավագ շաբաթվա արարողություններին։ Մենք շնորհակալ ենք նաև, որ կապ է պահպանվում մեր Սենտ Ջորջ դպրոցի և Ս. Քաղաքի Ձեր Հոգևոր Ճեմարանի միջև։

Չորս տարի առաջ մենք պատիվը ունեցանք Անգլիայում ընդունելու Ձեր Գերագույն Կաթողիկոսին՝ Նորին Սրբություն Վազգեն Ա-ին։ Նրա այցելությունն ամրապնդեց այն կապերը, որոնք շատ տարիներից ի վեր աճում էին մեր երկու եկեղեցիների միջև։ Միասին հույս հայտնեցինք ապագայում ավելի սերտացնելու մեր հարաբերությունները, սպասելով, որ կգա ժամանակը, երբ հնարավոր կլինի մեր երկու եկեղեցիների միջև աստվածաբանական խոսակցություններ սկսել այստեղ Երուսաղեմում։

Այնուամենայնիվ մենք տխրեցինք, երբ լսեցինք եկեղեցու ծոցում առաջացած տագնապի և անհամերաշխության մասին։ Բոլոր քրիստոնյաների համար Երուսաղեմը լեռան վրա կանգնած քաղաք է, և բոլոր հավատացյալները նայում են նրան՝ որպես միության, խաղաղության և սիրո Սուրբ Քաղաքի վրա։ Այժմ կարող ենք փառք տալ, որ պառակտումը վերջացած է և անցյալը՝ մոռացության տրված։ Մենք Անգլիկան եկեղեցում մի անգամ ևս նայում ենք դեպի առաջ և աղոթում այն օրվա համար, երբ կարող կլինենք ավելի մերձենալ Հայ Ուղղափառ եկեղեցու մեր եղբայրներին։

Ինձ համար մասնավոր հաճույք է, որ Լոնդոնում է գտնվում ոչ միայն Նորին Սրբություն Վազգեն Ա-ի անձնական ներկայացուցիչը, այլև Սրբոց Հակոբյանց Ձեր միաբանության մեկ անդամը։ Պսակ եպիսկոպոս Թումայանը օգտակարակայան էր եկել ինձ ողջերթ մաղթելու և Ձեզ հղելու իր եղբայրական ողջույնները։

Հայցում եմ Աստուծո օրհնությունը Ձերդ Ամենապատվության, Սրբոց Հակոբյանց միաբանության, Ձեր բոլոր հոգևորականության և Ձեր հավատացյալ ժողովրդի վրա։ Թող խաղաղության Աստվածը, որ ի մեռելոց հարություն տվեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին՝ հավատացյալ հոտի այդ մեծ Հովվին, արյան հավիտենական ուխտով կատարելության առաջնորդի Ձեզ բոլոր բարի գործերում, կատարելու Իր կամքը, գործելու այն, ինչ հաճո է Նրա աչքին։